ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10 սեպտեմբերի 2026 թվականի N: 420 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N:395-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 1-ի թիվ ՔՏՄ/11.03/17743-26 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 3-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանային ապահովման պետական աջակցության տրամադրման նպատակով աջակցող աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N:395-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «Խաչատուր Խաչատրյան -Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ:» բառերը փոխարինել «Աշոտ Թորոյան -Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետի տեղակալ, խմբի անդամ:» բառերով:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 10 N: 420-Ա որոշման
Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2024 թվականի սեպտեմբերի 3-ի N: 395-Ա որոշման

ԿԱԶՄ

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Արտուշ Հովհաննիսյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, խմբի ղեկավար,
Էմիլ Պետրոսյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող, խմբի անդամ,
Լեյլի Ասլանյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ, խմբի անդամ,
Լիլիթ Խաչատրյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ,
Շիրակ Երանոսյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ,
Մանուկ Մանուկյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ, խմբի անդամ,
Աշոտ Թորոյան	- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետի տեղակալ, խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է